1656ին Յակոբ Զուղայեցի կը գնէ Ֆռանկանոց գիւղին կալուածները, և Ոսկանի որդի՝ Թարխանէն, իբրև բարեպաշտական նուէր կը ստանայ Մաստարա գիւղին երկուքուկէս դանկ կալուածը (23)։ Թեմուրաղ խանը և իր կինը՝ Խորի, և որդին՝ Հերակլ, Էնիսիլ նահանգին մէջ Թասմալուր կոչուած գիւղը կը նուիրեն կաթողիկոսին, բոլոր բնակիչներով, այգեստաններով, ջուրերով ևն., ի ծառայութիւն Աթոռին (24)։

1658ին դարձեալ նուէր կը ստանայ Սեթի որդի՝ Յակոբճանէն, Նորագեղի կալուածները, և չորսուկէս դանկ կալուած Եղուարդ գիւղէն, այգի մը Երեւանէն, ուրիշ այգի մը և ջրաղաց մը Զորագեղէն (25)։ Յետագային Յակոբճանի որդին՝ Սարուխան, կը պահանջէ Նորագեղի կալուածները. կաթողիկոսը զայն կը զոհացնէ իրմէ գնելով նոյն կալուածները 1674ին (26)։

1660ին, նոյն Սարուխանէն կը գնէ Եայճի գիւղին կալուածները, չորսուկէս դանկ կալուած Ամիրի գիւղէն, ուրիշ ջրաղաց մը Զորագեղէն և տուն մը Նորագիւ-

---

(23) Ա.Գդ 113-115։

(24) Ա.Գդ 207:

(25) Ա.Գդ 121։

(26) Ա.Գդ 122: